ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 2, 1965 Общественные науки

Ա. Հ. Արխանգյան

ԳԵՎՈՐԳ ԱՆՏՈՆԻ ՀՈՎՍԵՓՅԱՆՑ[1]

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունից անմիջապես հետո սկսված քաղաքացիական կռիվները իրենց ոլորտի մեջ էին առել ոչ միայն նախկին ցարական Ռուսաստանի ընդարձակ տարածությունները, այլ նրա համար գաղութային շուկաներ հանդիսացող ծայրագավառները, այդ թվում նաև Հյուսիսային Կովկասը։ Հյուսիսային Կովկասում կամ նրա սահմանամերձ մարզերում էին կենտրոնացել հակահեղափոխական ցարական գեներալներն ու կազակական ատամանները, որոնք ցանկանում էին արյան մեջ խեղդել նորաստեղծ սովետական իշխանությունը։ Սակայն Հյուսիսային Կովկասի, այդ թվում նաև Կուբանի աշխատավոր մասսաները վճռել էին զենքը ձեռքներին, իրենց արյան գնով պաշտպան կանգնել սեփական պետությանը և թույլ չտալ ցարական գաղաղած գայլերին հոշոտելու ու խեղդամահ անելու նրան։

Կուբանի բոլոր քաղաքներում, ստանիցաներում, գյուղերում ու խուտորներում 1918 թ. սկզբներին կազմակերպվել էին տեղական սովետներ։ Ինչ խոսք, որ Արմավիրը, որը հանդիսանում էր Կուբանի ամենախոշոր արդյունաբերական քաղաքներից մեկը և նրա պրոլետարիատը անցել էր հեղափոխական փառավոր ուղի, ամենից շուտ իրեն հայտարարել էր սովետական։ Դա, իհարկե, դուր չէր գալիս Արմավիրի շուրջը բույն դրած հակահեղափոխական կազակությանը, այդ պատճառով էլ համարյա ամբողջ քաղաքացիական կռիվների ընթացքում, ընդհուպ մինչև նրա վախճանը, քաղաքը շատ անգամ ձեռքից-ձեռք է անցել։ Բավական է նշել, որ սպիտակներին հաջողվում է չորս անգամ գրավել Արմավիրը և իրենց դաժան լուծը դնել քաղաքի հեղափոխական պրոլետարիատի ու աշխատավոր բնակչության վզին, սակայն Արմավիրի աշխատավորությունը միշտ էլ կենքը ձեռքին ոտքի է կանգնել ցարական դահիճների դեմ։

Քաղաքի ազատագրման համար մղված մարտերում աչքի ընկնող ծառայություն է մատուցել Թամանյան բանակի հեծյալ գնդի հրամանատար Գևորգ Անտոնի Հովսեփյանցը։ Ահա թե ինչ պատմեց ականատես Ասյադյանը, որը այդ ժամանակ աշխատել է Արմավիրի Արտակարգ հանձնաժողովում (Չեկա)։ «Թամանյան բանակի հեծյալ գունդը կանգնած էր Արմավիրի 2-րդ երկաթուղային կայարանում։ Մենք ամենքս այնտեղ հավաքված սպասում էինք կռվի սկսվելուն։ Հեծյալ գնդին առաջ շարժվելու հրաման էր տալիս Թամանյան բանակի հրամանատար Կյովտուխը։ Հերոսին վայել համարձակությամբ թուրը պատյանից դուրս քաշեց ու գլխից վեր բարձրացնելով առաջ սլացավ մեր Հովսեփյանցը»։

---

1 Մի հատված «Հյուսիսային Կովկասի հայ գաղթականների» ձեռագիր աշխատությունից։

Այստեղ չի կարելի մանրամասն կանգ չառնել այն փառավոր սխրագործությունների մասին, որոնք կատարել է Գ. Ա. Հովսեփյանցը, սկսած Սև ծովի ափերից մինչև Կալմիկական ավազուտ տափաստանները, այնտեղից էլ Աստրախան։

1918 թ. գարուն... Ամբողջ Հյուսիսային Կովկասը բոցավառվել էր քաղաքացիական կռիվների հրդեհով։

Արմավիր, անունը հայկական, իսկ ինքը ռուսական արդյունաբերական քաղաք, որի նշանակությունը շատ կարևոր է եղել ոչ միայն Կուբանի, որի Բագուհին է, այլև Ռուսաստանի հարավի համար։ Քաղաքի շուրջը մոլեգնում էր քաղաքացիական կռիվների ամենակուլ փոթորիկը։ Այստեղ հն ապաստան գտել Ղարսի շրջանից և Արևմտյան Հայաստանից գաղթած բնազուրկ հայեր, որոնք հազիվ ճողոպրել էին օսմանյան թուրքերի յաթաղանից, ադրբեջանական մուսավաթականների դաշույններից, վրաց մենշևիկների մտրակից և ամեն տեսակի ու գույնի հայ մաուզերիստների ալան-թալանից ու հանգրվան գտել ռուս մեծ, եղբայրական ժողովրդի ծոցում։ Ճիշտ է, նրանք թեև վերջնականապես փրկվել էին ֆիզիկական բնաջնջումից, սակայն ծայրահեղ կարիքը նրանցից շատ-շատերին գցել է անողորմ մահվան գիրկը. տեղական սովետական իշխանությունը կտրված լինելով կենտրոնական կառավարության անմիջական նյութական օգնությունից, տեղի ունեցող քաղաքացիական կռիվների պատճառով ինքն էլ սարսափելի զրկանքի ու դժվարությունների դատապարտված լինելով ի վիճակի չէր նվազագույն չափով բավարարելու նրանց կարիքները։ Գաղթականների մեծ մասը իր գոյությունը քարշ է տվել բաց երկնքի տակ, իսկ միայն մի փոքր մասն է, որ ապաստան է գտել տեղական հարուստների ցորենի պահեստներում։

Ահա այդ տանջված ու սովալլուկ ամբոխի հետ է լինում միջահասակ, լայնաթիկունք, երկաթյա բազուկներով, կամքի անսասան ուժ արտահայտող կայծկլտուն աչքերով մի երիտասարդ, գլխին դրած փոքրիկ կլորակ կուբանկա, հագին լեռնորդու չերքեզկի, ոտքերին երկարաճիտ կոշիկներ ու մեջքից կախ տված կազակի կայծակնացող թուր։ Այդ երիտասարդը Գևորգ Անտոնի Հովսեփյանցն էր։

1918 թ. փետրվար-մարտ ամիսներին Արմավիրի կուսակցական կազմակերպության անմիջական ղեկավարությամբ, քաղաքում կազմակերպվում է հատուկ հեծելազորային էսկադրոն, որի մարտիկների կազմում կային նաև որոշ թվով գաղթական հայ երիտասարդներ։ Այդ էսկադրոնի հրամանատար է նշանակվում Գ. Ա. Հովսեփյանցը։

«Արմավիրի ջոկատը, որը հետագայում մտավ Թամանյան բանակի կազմի մեջ, ուներ կազմակերպված առանձին հեծելազորային էսկադրոն, որի կազմի մեծ մասը բաղկացած էր հայերից։ Էսկադրոնի հրամանատարն էր Գ. Ա. Հովսեփյանցը, իսկ նրա թիկնապահը՝ Շահնազարովը»[2]։

Արմավիրի ջոկատը հանդիսանում էր Հյուսիսային Կովկասյան կոմիտե բանակի զորամասերից մեկը։ Բանակի ղեկավարության հրամանի համաձայն ջոկատը անմիջապես օգնության պետք է հասներ Եկատերինոդարի (Կրասնո-

2 Ա. Խ. Ֆեդին, Գ. Հովսեփյանց, հիշողություններ, Արմ. գավառագիտ. թանգարան, ձեռագիր, էջ 1, 1964։ Ինքը՝ Ֆեդինը եղել է Թամանյան բանակի Պավլոգրադյան գնդի բաղ. կոմիսարը. նույն գնդում հեծելազորային էսկադրոնի հրամանատար է եղել Գ. Ա. Հովսեփյանցը։ (Ծանոթ. հեղ.)։

դար) կարմիր զորամասերին, որոնք Դենիկինի ավազակային բանդաների դեմ անհավասար պայքարի էին դուրս եկել։ Հովսեփյանցի էսկադրոնը անմիջապես առաջ սլացավ դեպի Եկատերինոդար։ Հետագայում, ռազմական գործողությունների հարափոփոխ զարգացման հետևանքով Հովսեփյանցի էսկադրոնը միանում է Պավլոդարդյան ջոկատի հետ։

1918 թ. ապրիլի վերջերին Պավլոդարդյան ջոկատի հետ միանում են նաև ուրիշ զորամասեր, ջոկատը վերակազմվում ու դառնում է զորական խոշոր միավորում և ստանում Պավլոդարդյան գունդ անունը։ «Գունդն ուներ երկու հեծելազորային էսկադրոն, որոնցից մեկի հրամանատարն էր Գ. Ա. Հովսեփյանցը, իսկ մյուսինը՝ Վ. Սոզոնովը։ Թե Հովսեփյանցը և թե Սոզոնովը ընտրվում են գնդի կուսակցական կոմիտեի անդամներ»[3]։

1918 թ. հունիսին կազմակերպվում է մի նոր պահեստային գունդ, որը պետք է հանդիսանար մի տեսակ ուսումնական դպրոց, որտեղ մարտիկները ռազմական ու քաղաքական պատրաստություն պետք է ձեռք բերեին։ Նոր գնդի կազմակերպման պատասխանատվությունը դրվում է Գ. Ա. Հովսեփյանցի և Վ. Սոզոնովի վրա, որպես ավելի փորձված ու ավելի հմուտ հրամանատարներ։ Սակայն այդ գունդը ի վիճակի չի լինում կատարելու իր դերը։ Վրա հասնող անհետաձգելի դեպքերի բերումով անմիջապես նետվում է մարտական գործողությունների ասպարեզը և միանում այն զորքերի հետ, որոնք Թամանի թերակղզուց առաջ էին շարժվում դեպի Նովորոսիյսկ։

Դեպի Նովորոսիյսկ էին շարժվում նաև Պավլոդարդյան գունդն ու մի շարք այլ զորամասեր, որոնք Կուբանի արևմտյան ծովափին տեղական մարտեր էին մղել սպիտակ գվարդիական զորամասերի դեմ։ Երբ Թամանում և ընդհանրապես Կուբանի արևմուտքում գործող բոլոր կարմիր զորամասերը մարտեր մղելով դալիս համախմբվում են Գելինջիկում և այդտեղ 1918 թ. օգոստոսի 27—28-ին կազմակերպվում է Թամանյան լեգենդար կարմիր բանակը։ «Թամանյան զորամասերը, Նովորոսիյսկի գրավումից հետո, մարտեր մղելով հասնում են Գելինջիկ և այդտեղ էլ 1918 թ. օգոստոսի 27—28-ին վերախմբավորման ենթարկվելուց հետո կոչվում են Թամանյան բանակ»[4]։

Մեր հայրենիքի պատմության ոսկե գրքում լեգենդար Թամանյան կ. բանակը իր հաղթական երթը սկսել է այն արյունահեղ ճակատամարտով, որը նա մղել է դրկանքների պայմաններում, երբ այդ բանակը Գելինջիկից առաջ էր շարժվում դեպի Տուապսե։ Գաղաղած թշնամին՝ ներքին հակահեղափոխական սպիտակգվարդիական բանդիտները թե առած թուրքերի, գերմանացիների և վրացական մենշևիկների ցույց տված ռազմական օգնությունից, ցանկանում են Արխիպո-Օսիպովկայի տակ շրջապատել և գլխովին ոչնչացնել Թամանյան բանակը։ Թշնամին իրեն համար ընտրել էր չափազանց հարմար ու պաշտպանված դիրք։ Նրա ընտրած տեղանքը, որը ընկած էր Վուլան գետի աջ բարձրադիր ափին ու Սև ծովի միջև, իրենից ներկայացնում էր մի խիստ նեղ միջանցք (коридор)։ Առաջ գնալու ուրիշ ճանապարհ չկար։ Հակառակորդը մինչև վերջը օգտագործել էր իր բարենպաստ տեղանքի բոլոր առավելությունները և ստեղծել բազմաթիվ կրակային կետեր, որոնք կարող էին ոչնչացնել միջանցքով անցնել համարձակվող ամեն մի շնչավոր էակի։

3 Նույն տեղում։

4 Ա. Պ. Գորլով, Հերոսական երթ (Героический поход) Մոսկվա, Զինհրատ, 1963։

Թամանյան բանակի կարմիր զորամասերը դանդաղորեն առաջ են շարժվում դեպի երկարաձիգ ու անել դժոխային միջանցքը։ Թշնամու կողմից ոչ մի շարժում չի նկատվում, ոչ մի ձայն չի լսվում, շրջապատում մահասարսուռ լռություն է տիրում։ Եվ երբ կարմիր բանակը իր ամբողջ կազմով գրոհում է միջանցքի ծոցում հանկարծ, անսպասելիորեն սկսում են ճարճատել գնդացիրները, ահեղագոռ մոնչում են թնդանոթները ու լսվում անընդհատ պայթող հրացանների կրակոցները։ Կարծես ողջ բանակին չորս կողմից իր գիրկն է առնում հրաբխի խառնարանից դուրս ժայթքող հրաշունչ լավան և սպառնում մի ակնթարթում ամեն ինչ ոչնչացնել։

«Մեր բանակի շարժման պայմաններում նահանջելը անհնարին էր, և իսկապես, այդ մասին ոչ մեկը չէր էլ մտածում։ Ե. Ի. Կովտյուխը իր մոտ է կանչում Գ. Ա. Հովսեփյանցին, որի հրամանատարության տակ գործող էսկադրոնը մեծ մասամբ Արմավիրի հայերից ու սերբերից էր կազմված, և հրամայում է ինչ գնով էլ լինի ձեղքել թշնամու շղթան, անցնել նրա թիկունքը ու մահացու հարված հասցնել։ Հովսեփյանցը, ինչպես հերոսին է վայել, կտրուկ շարժումով անցնում է առաջ, թուրը պատյանից դուրս է քաշում, բարձրացնում գլխից վեր, արագ իջեցնում է կղակի հավասարությանը և ուղղահայաց դիրքից փոխադրելով հորիզոնական դիրքի համբուրում։ Մարտիկները մի մարդու պես կրկնում են իրենց հրամանատարին։ Տիրում է ակնթարթային լռություն։ Դա հայ մարտիկների երդումն էր, որով նրանք խոստանում էին հայրենիքի հանդեպ իրենց պարտքը սրբությամբ կատարել։

Հովսեփյանցը մերկացրած թուրը գլխից վեր բարձրացրած առաջ է նետվում։

Էսկադրոնը մի մարդու պես հետևում է նրան, էսկադրոնի առաջին շարքը ոչնչանում է թշնամու խաչաձև կրակից, սակայն հայ մարտիկների գրոհի թափը դրանից չի թուլանում։ Նրանք կրկնապատկված եռանդով, ոգևորված իրենց քաջարի հրամանատարի օրինակով առաջ են սլանում և թշնամուն թրատելով կամ ձիերի ոտքերի տակ ճզմելով խառնում նրանց շարքերը ու դուրս գալիս թիկունքը։

Արմավիրի հայ հեծյալները, իրենց անվեհեր հրամանատարի գլխավորությամբ, սրբությամբ կատարեցին սովետական հայրենիքի հանդեպ ունեցած իրենց պարտքը, սառույցը հայ հեծյալների փրփրաբաշ ձիերի սմբակների տակ անդառնալիորեն ջարդված էր, նեղ միջանցքը գրավված. Արխիպո-Օսիպովկայից դեպի Տուապսե ճանապարհը Թամանյան բանակի առջև բոլորովին բաց էր։ Վրաց մենշևիկների տակտիկները ցանկանում էին փրկել այն ինչ արդեն անհուսալիորեն մահվան էր դատապարտված։ Սակայն շատ շուտով Պալտավյան էսկադրոնը Ի. Կուկսի հրամանատարությամբ վրաց-անան մենշևիկյան գնդի հետ կռվի է բռնվում, նրան գլխովին ջախջախում ու դերի վերցնում։

Թշնամու շարքերում խուճապը կատարյալ էր։ Այդ ահավոր մարտում նրանցից շատ քչերը կարողացան ազատվել ու ապաստան գտնել ծովում կանգնած իրենց հովանավորների երկու նավերում, որոնցից մեկը կարմիրների թնդանոթների դիպուկ հարվածից գնում է ծովի հատակը, իսկ մյուսին հազիվ հաջողվում է հապճեպ հեռանալ ու ճողոպրել վերահաս վտանգից։

---

5 Ա. Խ. Ֆեդին, Գ. Ա. Հովսեփյանց, հիշողություններ, Արմ. գավառագիտ. թանգարան, ձեռագիր, էջ 3։

Հովսեփյանցի այդ ճակատամարտում մատուցած ծառայություններ անգնահատելի է. «Ե. Ի. Կովտյուխը,—գրում է Ա. Խ. Ֆեդինը,—գնաց դեպի Հովսեփյանցը, որի ձին երեք գնդակով վիրավորված էր, սակայն իրեն պահում էր մարտական վիճակում, զրկեց նրան, համբուրեց ու ասաց. Ընկեր Հովսեփյանց մեր երթի առաջին հերոսական հաղթանակը պատկանում է Ձեզ, քո էսկադրոնին և այն բոլոր ընկերներին, որոնք գնացին քո ետևից։ Այդ հաղթանակով մենք հպարտանում ենք և ոչ ոք, ոչ մի ժամանակ այդ չի մոռանա»[6]։

Երկրորդ խոշոր ճակատամարտը, որը մղել է Թամանյան բանակը, հանդիսանում է Տուապսե քաղաքի ազատագրման համար մղված խոշոր մարտը։ Այս ճակատամարտում նույնպես մեծ դեր է խաղացել Գ. Ա. Հովսեփյանցի ղեկավարած էսկադրոնը, որը թշնամուն խփել է քաղաքի հյուսիս-արևելքից և առաջինը մտել Տուապսե։ 1918 թ. սեպտեմբերի 1-ի Տուապսեն սպիտակ բանդիտներից բոլորովին մաքրվում է։

1926 թ. փետրվարի 20 ին Կրասնոդարի կուսակցական Երկրկոմը, ի պատիվ Թամանյան կ. բանակի, հուշերի երեկո է կազմակերպում։ Այդ երեկոյին ներկա են գտնվում բազմաթիվ թամանցիներ՝ Ե. Ի. Կովտյուխը, Գ. Ն. Բատորինը և ուրիշ բազմաթիվ հրամանատարներ։ Երեկոյում ելույթ է ունենում Թամանյան բանակի հրամանատար Ե. Ի. Կովտյուխը։ Նա առանձնապես կանգ է առնում Տուապսեի գրավման, և միևնույն ժամանակ այդ օպերացիայում Գ. Ա. Հովսեփյանցի կատարած քաջագործությունների վրա, ասելով. «Պավլոդարյան գնդի հեծյալները անցում կատարեցին ծովեզրյա խոր ձորի միջով, որը իրենից ներկայացնում էր մի նեղ քարքարոտ հեղեղուտ և առաջինը ներխուժեցին քաղաք (Տուապսե — Ա. Ա.)»[7]։

Վառոդի ծխով թրծված երկու անբաժան ընկերներ էին Հովսեփյանցն ու Սողոնովը, որոնք ամեն տեղ և ամեն դեպքում իրար լրացնում էին։ Հովսեփյանցը առաջնորդում էր Պավլոդարյան գնդի հեծյալներին, իսկ Սողոնովը ամբողջ գնդին։ Այդ գունդը Թամանյան բանակի ամենամարտունակ, ամենախիզախ զորամասն էր։

Բանակի մարտիկների հիմնական կորիզը կազմում էին սևծովյան նավաստիները և Կրասնոդարի երկրամասի հյուսիս և արևմտյան ծովափնյա շրջանի տարբեր վայրերում ցրված կարմիր բանակային զորամասերը։ Բանակի հրամանատարն էր սևծովյան խիզախ նավաստի Մատվեևը, նրա տեղակալը՝ Ե. Ի. Կովտյուխը։ Երբ Կովկասյան բանակի հրամանատար դավաճան Սարոկինի կողմից Մատվեևը ենթադրաբար գնդակահարվում է, Թամանյան բանակի մարտիկների կողմից հրամանատար է ընտրվում Ե. Ի. Կովտյուխը։

Թամանյան բանակը իր առաջ խնդիր էր դրել, ինչ գնով էլ լինի միանալ Հյուսիսային Կովկասյան կարմիր բանակի հետ, որի կենտրոնը այդ ժամանակ գտնվում էր Պյատիգորսկում։ Դրա համար էլ նա Թամանից, երթի էր դուրս եկել դեպի Արմավիր։ Թամանյան բանակը իր երթի ճանապարհը հաղթանակներով է պսակել, անցնելով չափազանց մեծ տարածություն, որը ձգվում էր Սև ծովի ափերից մինչև Արմավիր։

Այդ ճանապարհը, որը կազմում է շուրջ 260 կմ ձգվում է խորը կիրճերի, բարձրաբերձ լեռների, մութ անդունդների, կուսական անտառների ու արագա-

---

6 Նույն տեղում, էջ 4։

7 Նույն տեղում, էջ 5։

հոս գետերի վրայով։ Հաղթարշավը սպիտակների հետ հաճախ կրկնվող մանր ընդհարումներով շարունակվել է մինչև Կուրգաննայա կայարանը։ Կայարանի շրջակայքում տեղի ունեցած ահավոր մարտերում Պավլոգրադյան գունդը խոշոր կորուստներ է տվել։ Այդ կռիվներում հերոսի մահով նահատակվում է գնդի հրամանատար Վ. Սոզոնովը։ Մեծ կորուստ է կրում նաև Հովսեփյանցի հեծյալ էսկադրոնը։ Սակայն, չնայած այդ բոլորին կարմիրներին վերջ ի վերջո հաջողվում է ցիր ու ցան անել գեներալ Պակրովսկու բանդաներին ու գրավել կայարանը։ Գունդը շատ շուտով բուժում է իր ծանր վերքերը, ստանալով մարդկային, ռազմատեխնիկական ու պաշարների անհրաժեշտ համալրումներ։ Նահատակված Սոզոնովին փոխարինում ու գնդի հրամանատար է ընտրվում Հովսեփյանցը։ Հետագայում, երբ գունդը վերակազմվում ու դառնում է բրիգադ նա արդեն բրիգադի հրամանատարն է։

Մոտենում է հարազատ Արմավիրը ազատագրելու ժամանակը։ Թամանյան բանակի զորամասերը քայլ առ քայլ մոտենում են Արմավիրին։ Երկաթուղու Արմավիր 2-րդ կայարանի շրջակայքում են կենտրոնանում Թամանյան բանակի զորամասերը, որոնց թվում և Հովսեփյանցի հեծյալ բրիգադը։ Ինչպես միշտ, այստեղ էլ թշնամու վրա առաջին հարձակվողը լինում է անվեհեր Գևորգը. չէ որ խնդիրը վերաբերում է Արմավիրին... «Մեկ էլ հանկարծ տափաստանը ծածկվեց փոշու ամպերով, սուսերամերկ ու սրարշավ առաջ սլացող մարտիկների ահեղագոչ «ուռռա» ականջ էր խլացնում, իսկ նրանց առջևից, մերկացրած թուրը ձեռքին սլանում էր մեզ ամենքիս սիրելի Հովսեփյանցը... և քիչ անց իրենց քաջությամբ հռչակված Կուրանի կաղակները սարսափահար փախչում էին... Արմավիրը ազատագրված էր»—պատմում է նախկին չեկիստ, այժմ թոշակառու Սայադյանը։

Արմավիրի ազատագրումից հետո Թամանյան բանակը, որպես ռազմական առանձին միավորում, դադարում է գոյություն ունենալուց։ Նա վերջնականապես միաձուլվում է Հյուսիսային Կովկասյան բանակի հետ և Ստավրոպոլը ազատագրելու համար ուղղություն վերցնում դեպի Նիվինոմինսկի։ Ստավրոպոլի մատույցներում տեղի ունեցած մարտերի ժամանակ Հովսեփյանցը ծանր վիրավորվում է և երկար ժամանակ պառկում հոսպիտալում։

1918 թ. նոյեմբերի 28-ին հեծյալ բրիգադի հրամանատար Հովսեփյանցը Ստավրոպոլի ազատագրման ժամանակ ցույց տված անօրինակ քաջագործության ու հերոսության համար պարգևատրվում է Մարտական կարմիր դրոշի շքանշանով և միևնույն ժամանակ Ստավրոպոլի քաղաքային սովետի գովասանագրով։

Նոյեմբերյան եռօրյա մարտերից հետո Հովսեփյանցին հաջողվում է ամսի 29-ին սպիտակներից ետ խլել Ալեքսանդրովկա գյուղը (станица) և դրանով էլ, թեկուզ ժամանակավորապես, ապահովել դեպի Պրիկումսկ (նախկին Ս. խաչ.) նահանջող կարմիր զորամասերի թիկունքը։

«1918 թ. դեկտեմբերի 5-ին 11-րդ բանակը (նախկին Հ. Կովկասյան բանակ), հրաման ստացավ նահանջել դեպի Պրիկումսկ, այդ նահանջին որպես արիերգարդ մասնակցում էր Հովսեփյանցի հեծյալ բրիգադան»[8]։

---

8 Ս. Պ. Գորլով, Հերոսական երթ, Մոսկվա, Զինհրատ, 1963, էջ 117։

Պրիկումսկում Գ. Ա. Հովսեփյանցը հանդիպում է Աբրահամ Մատվեևիչ Կալաբեկովի հետ[9]։

Սաավրոպոլում հրատարակվող «Ստավրոպոլ» գրական-գեղարվեստական հանդեսը Ա. Մ. Կալաբեկովի մասին գրել է հետևյալը. «Աբրահամ Մատվեևիչ Կալաբեկովը ծնվել է 1883 թ. Ս. խաչ (святой крест), այժմ Պրիկումսկ գյուղաքաղաքում, չքավոր գյուղացու ընտանիքում։ Նա 1917 թ. Ս. խաչի բոլշևիկյան խմբի կազմակերպիչներից մեկն էր։ Հետագայում ակտիվ մասնակցություն է ունեցել Մերձ-Կումայում կարմիր գվարդիական ջոկատների կազմակերպմանը։ Ընտրվել է գավառային Խորհրդի կոմիտեի և գավառային արտակարգ հանձնաժողովի անդամ։ 1918 թ. Աբրահամ Մատվեիչը, որպես չեկայի կոլեգիայի անդամ հայտնաբերել ու լիկվիդացիայի է ենթարկել Նովո-Ռոմանովկայի, Ուրաժայնիի, ձախափնյա Կումայի, Արխանգելսկի և Վորոնցովո-Ալեքսանդրովոյի հակառևոլյուցիոն խմբավորումները։

«1919 թ. սկզբներին, երբ Կարմիր բանակը նահանջում էր Աստրախան, Կալաբեկովը որպես ջոկատի հրամանատար և Ս. խաչ քաղաքի պարետ, բանակի նահանջը քողարկելու նպատակով ղեկավարում էր նրա մատույցներում մղվող մարտերը։ 11-րդ բանակի Աստրախան նահանջելուց հետո Կալաբեկովը աշխատում էր Կ. Բանակի քաղաքական և հրամանատարական պոստում։ 1920 թ. նա մասնակցել է Կալմիկիայի ու Թերեքի մարզերի հակառևոլյուցիոն բանդաների լիկվիդացիայի գործին»[10]։

Ահա այն փառավոր ուղին, որը անցել է Աբրահամ Մատվեևիչը սովետական իշխանության և Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիայի առաջին օրից մինչև նրա հաղթական ավարտը։

Աբրահամ Մատվեևիչ Կալաբեկովը այժմ 81 տարեկան, չափազանց աշխույժ կենսաթոշակառու ծերունի է։ Նա Ստավրոպոլ քաղաքի պարտիական, պետական ու հասարակական կազմակերպությունների անդամ է։

Ահա հայ ժողովրդի այս արժանավոր զավակի հետ է, որ Հովսեփյանցը հանդիպում է Պրիկումսկում, բայց նրանց ծանոթությունը երկար չի տևում, որովհետև Հովսեփյանցը որպես նահանջող բանակի հրամանատարներից մեկը ստիպված է լինում շարժվել դեպի Կալմիկիայի ավազուտ տափաստանները։

Հովսեփյանցը իր կյանքի փառավոր դիրքը փակել է Աստրախանի ճանապարհին, երբ 11-րդ բանակը 1918 թ. վերջերին, բանակի հրամանատար դավաճան Սարոկինի հրամանի համաձայն նահանջում էր Կալմիկիայի տափաստաններում թշնամու գերազանց ուժերի ու սննդամթերքի պակասության պատճառով։ Ճանապարհին տեղի ունեցած անհավասար մարտերում Հովսեփյանցը ինը տեղից վիրավորվում է, բայց չի հեռանում իր մարտական ընկերներից[11]։

---

9 Կալաբեկովը ընիկ Պրիկումսկ (նախկին Ս. խաչ) քաղաքից է, այժմ ապրում է Ստավրոպոլում, իսկ միակ աղջիկը, իր ամուսնու հետ, Երևանում։

10 «Ստավրոպոլ» գրական-գեղարվեստական հանդես, № 2, 1957, էջ 55—56։

11 Ծանոթություն — Ա. Խ. Թեղինի կարծիքը Հովսեփյանցի մահվան մասին ճիշտ չէ։ Սայադյանը ասում է, որ «ես 1920 թ. նրան (Հովսեփյանցին — Ա. Ա.) հանդիպել եմ Երևանում, գրկախառնվել ու համբուրվել հետը։ Իսկ Ա. Մալխասյանը իր «Սովետական բանակի հայ գործիչներ» գրքում գրել է, որ Հովսեփյանցը 1921 թ. դաշնակցական ավանտյուրայի ժամանակ ընկել է տխրահռչակ խմբապետ դելի Ղազոյի տղաների ձեռքը ու սպանվել։

Ա. Խ. Ֆեդինը հետևյալ կերպ է բնութագրել իր մարտական ընկերոջը. «Հովսեփյանցը ոչ միայն քաջ ու համարձակ հրամանատար էր, այլ որպես մարտի մեծ նշանառու տիրապետում էր նրա բոլոր գաղտնիքներին։ Նա երբեք չէր ցանկանում, թեկուզ մի բոպե հեռանալ իր գնդից։ Նա շարունակ կրկնում էր. «Թողեցիր գունդը, կորավ գունդը, ազատ օդում բոլոր վերքերը բուժվում են»։ Հովսեփյանցը իր ստորադասյալների, մանավանդ շարքային մարտիկների վերաբերյալ առանձնահատուկ ու սրտագին ուշադրություն է հանդես բերել։ Նա միշտ ասել է. «երբ մարդիկ կուշտ են, ձիերը կուշտ՝ երթից չեն վախենա։ Վատ ձի հեծած մարտիկը — վառարանին թառած պառավը քեզ օրինակ»։ Հովսեփյանցը անհաշտ պայքար է մղել այն մարդկանց դեմ, որոնք զբաղվել են թալանով կամ կողոպտել են ժողովրդին։ Նա միշտ կրկնել է «մաքուր ռեվոլյուցիոները ավազակ չէ»[12].

А. Г. Арханян

ГЕВОРГ АНТОНОВИЧ ОВСЕПЯНЦ

Резюме

Гражданские войны, начатые после Октябрьской социалистической революции, охватили не только обширные территории царской России, но и ее окрестности, в том числе и Северный Кавказ, где, сосредоточиваясь, антиреволюционные царские генералы и казацкие атаманы хотели в крови задушить молодую советскую власть.

Трудящиеся Северного Кавказа, в том числе и Кубани, с оружием в руках стойко защищали советскую власть. В битвах за освобождение Армавира активное участие принимал командир кавалерийского полка Таманской армии Геворг Антонович Овсепянц.

В данной статье рассказывается о боевом пути Г. А. Овсепянца, пройденном в годы гражданской войны.

12 Ա. Խ. Ֆեդին. Հուշեր Հովսեփյանցի մասին, էջ 6։